

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2020 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմել է՝ համայնքի ղեկավար

ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆԸ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2020թ.-ի 28 փետրվարի թիվ 08-Ա որոշմամբ

ԼԵՌՆԱՊԱՏ 2020թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----	3
1. ՀԱՄԱՅՆՔԻՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆՆՊԱՏԱԿՆԵՐԸ -----	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----	8
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020Թ. ԾՐԱԳԻՐԸ -----	24
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----	26
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----	28

Ներածություն

Լեռնապատ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի (**ՏԱՊ-ի**) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (**ՀՀԶԾ-ով**) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

ՏԱՊ – ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

ՏԱՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

ՏԱՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2020 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

ՏԱՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2020 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

ՏԱՊ-ի 4-րդ բաժնում բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (**Աղյուսակ 8**) ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 54-Ն որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ **համայնքի տեսլականն է՝ Լեռնապատ համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, հատապտուղների վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:**

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքն է, իսկ թիրախային արժեքը՝ 2020 թվականին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2020 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

ՏԱՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	22,0	23,0
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	1996	2020
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	0,09	0,08

Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	10/20	13/25
--	-------	-------

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	22,0	23,0
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
Աջակցել բնակչության, հատկապես երիտասարդության, ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների իրականացմանը	համայնքի բնակչության և երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակի բարձրացում	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
Բարձրացնել արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման մաշխատանքների որակը	Բնակիչների պաշտպանությունը բնական աղետներից և անվտանգ կյանքի ապահովում	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:	Գիշերային լուսավորված փողոցներ, լուսավորման հենասյուների քանակ/երկարություն	107/9000	120/10000

	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա)	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
	Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
Ոլորտ 5. Հողօգտագործում			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարձրացնել համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:	Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	Ավելի շատ լավ , քան վատ	բավականին լավ
	Անֆալտապատված ներհամայնքային ճանապարհների և փողոցների երկարությունը մ	4470	4800
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
Խթանել համայնքում գործարար միջավայրի բարելավումը ու զարգացումը:	Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների (ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների) թիվը	10	13

Ոլորտ 8. Կրթություն			
Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը, աջակցել արտադպրոցական կրթության իրականացմանը, նախադպրոցական կրթության խմբաքանակների ավելացմանը	ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների թվի աճ	բավականին լավ	լավ
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Աջակցել տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների անցկացմանը:	համայնքում մշակույթային կյանքի զարգացում, երիտասարդների ներգրավումը կազմակերպվող միջոցառումներին /միջոցառումների քանակը տարվա ընթացքում/	12	15
Ոլորտ 10. Առողջապահություն			
աջակցել համայնքում գործող բժշկական օգնություն իրականացնող ԱԿ-ի գործունեությանը	բնակչությանը անվճար դեղորայքի տրամադրում./սոցիալապես անապահով խավի բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
աջակցել ներհամայնքային և միջհամայնքային պարբերական զանգվածային միջոցառումների և մրճույթների իրականացմանը, մարզադահլիճի գույքի ձեռքբերում, հանգստի գոտու ստեղծում	առողջ ապրելակերպ՝ սպորտով զբաղվող բնակիչների տարբեր տարիքային խմբերի քանակի աճ	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ

	իրականացվող ծրագրից		
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը, աջակցել չմշակվող վարելահողերի օգտագործման տրամադրելու գործընթացին, իրականացնել ոռոգման ցանցերի վերանորոգման և շահագործման աշխատանքներ	Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսի մեջ, %	22,0%	25,0%
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
Անասնապահության զարգացման և անասնաբուժասանիտարական անվտանգության պահպանություն	Հակուկ նպատակային նյութերի ձեռք բերում անասնաբուծության բնագավառում , կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխում, անասունների գլխաքանակի ավելացում/խոշոր եղջերավոր անասուններ/	722	800
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)	ավելի շատ վատ , քան լավ	ավելի շատ լավ, քան վատ
	Տեղափոխված աղբի ծավալը, ամսական կտրվածքով՝ տոննա	15	18
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			

2. Համայնքի 2020 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	40240,4	Ընդհանուր համայնքային
2.	Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	500,0	
Ընդամենը		40740,4	
Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Համայնքի ջրամատակարարման համակարգերի ընթացիկ նորոգում, ոռոգման ցանցի նորոգում	1000,0	
2.	Ներհամայնքային փողոցների լուսավորության համակարգերի ընդլայնում	1000,0	
Ընդամենը		2000,0	
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	արոտավայրեր տանող հանդամիջյան ճանապարհների նորոգում	600,0	
2.	Միջհամայնքային փողոցների բարեկարգում՝ փոսալցում և հարթեցում, ասֆալտապատում	7500,0	
Ընդամենը		8100,0	
Ոլորտ 8.Կրթություն			
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	9040,0	
2.	Աջակցություն դպրոցի աշակերտներին	350,0	
Ընդամենը		9390,0,0	
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Համայնքի մշակութային միջավայրի բարելավում, որակյալ ծառայությունների մատուցում	1060,0	
Ընդհամենը		1060,0	
Ոլորտ 10 Առողջապահություն			
1.	Բնակչությանը անվճար դեղորայքով ապահովում	200,0	
Ընդհամենը		200,0	
Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	2800,0	
Ընդամենը		2800,0	

Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
1.	Մեխանիզացիայի ձեռք բերում	5000,0	
2.	Հակուկ նպատակային նյութերի և ծառայությունների ձեռք բերում	1200,0	
Ընդամենը		6200,0	
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	1440,0	
Ընդամենը		1440,0	
Այլ ծրագրեր՝ պահուստային ֆոնդ		3923,2	
Ընդհանուրը		75853,6	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 6 Տրանսպորտ			
1.	Միջհամայնքային ճանապարհի փոսալցում, խիճապատում, հարթեցում՝ 1,5 կմ,-կաթի գործարանից մինչև 10-րդ փողոցի վերջը	3000,0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		3000,0	
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Մշակույթի տան հիմնում, արվեստի և արհեստի խմբակների ստեղծում և կահավորում	15000,0	Հին դպրոցի շենքի տրամադրում
Ընդամենը		15000,0	
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Դպրոցին հարակից մարզադաշտի վերակառուցում,	2500,0	Բարերարների աջակցություն
Ընդամենը		2500,0	
Ընդհանուրը		20500,0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ . Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից –			

	ավելի շատ լավ, քան վատ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 22%
--	--

Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում

Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը - ավելի շատ լավ, քան վատ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1 ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) – բավականին լավ 2. ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը-3 3. Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 3%-ով 4. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում-251 օր	Տեղեկատվական աղբյուրներ. Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի պահպանություն 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում 3. Համայնքի անշարժ գույքի կառավարում 4. Համայնքապետարանի և վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի և գույքի ընթացիկ նորոգում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 40240,4 հազ. դրամ 2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 17 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 2 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք			

		Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ - 6 %-ով 2. Հարկային պարտականությունները չկատարողների քանակի նվազեցում 4%-ով 3. Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 5 %-ով 4. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 5 %-ով 5. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում - 6%-ով	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ, առաջին և երկրորդ կարգի մասնագետներ	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ (գործողություններ) . 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում 3. Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում,		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 4 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ առկա է 3. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ՝ 3283,8 հազ.դրամ			
Միջանկյալ արդյունք Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Համայնքապետարանում իրականացվում է բնակիչների արագ և որակյալ սպասարկում 2. Համայնքապետարան դիմած այցելուների թիվը - 900 3. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ ավել	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ի տնօրեն	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մասնագետների առկայությունը

	քանվատ 4.ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից դիմում-բողոքներ չկան 5. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը- շաբաթը 1 անգամ 6.Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 3 օր				
--	---	--	--	--	--

Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեությանն ապահովում 2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում 3.Համայնքի գույքի կառավարման բարելավում 4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում 5. Աշխատակազմի աշխատողների աշխատանքային պայմանների բարելավում 6. Համացանցային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1.Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 15 2.Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր – առկա է 3.Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -2 4.Աշխատակազմում տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -1 5.ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր -3 6.Համայնքի պաշտոնական համացանցային կայք –առկա է
---	---

Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

Ծրագրի նպատակ. Հզորացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմի կառավարման համակարգերը բարելավվել են, աճել են աշխատակիցների գիտելիքները և հմտությունները, 10 %-ով	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Աշխատակազմի աշխատակարգերը և առկա կառավարման (վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլն) համակարգերը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.Աշխատակազմի բարելավված աշխատակարգեր և կառավարման համակարգեր – առկա է 2.ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան	Աշխատակազմի քարտուղար	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան, ֆինանսական ռեսուրսների և մասնագետների առկայությունը

բարելավվել են	կողմից ստացվաշ դիմում-բողոքներ չկան 3. Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը - 3 4. Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը - 1 5.Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը -8 6. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատակիցների կարծիքը բարելավված կառավարման համակարգերի վերաբերյալ - շատլավ 7.Տարվա ընթացքում բարելավված աշխատակարգերի թիվը -2 8. Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի	հաշվետվություններ, քաղաքացիականհասարակություն, բնակիչներ			
Միջոցառումներ (գործողություններ) . 1. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 2. Համայնքային քաղաքականությունների, ծրագրերի մշակում և կառավարում 3.Համայնքայինծառայողներիպաշտոններիանձնագրեր իխմբագրում 4. Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխանտեխնիկականևծրագրայինմիջոցներ ով ապահովում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1.Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր` <b>.500,0</b> հազ. դրամ 2.Աշխատակազմի վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր –առկա է 3.Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն –առկա է <b>Ֆինանսավորման աղբյուրը` համայնքի բյուջեի միջոցներ			
Միջանկյալ արդյունք 2. Աշխատակազմի աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները բարձրացել են	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.Աշխատակազմում ՀԿՏՀ-ի առկայությունը – առկա է 2. ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը – 1 3.Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության համակարգերի թիվը -1	Տեղեկատվական աղբյուրներ Աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Աշխատակազմի քարտուղար	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսների և մասնագետների առկայությունը
Միջոցառումներ (գործողություններ) . 1.Աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով 2.Աշխատակազմի գույքի նորացում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1.Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի աշխատակիցներ - 1			
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ոլորտային նպատակ. Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1.Գիշերային լուսավորված փողոցների ավելացում 2.Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) -			

	ավելի շատ վատ, քան լավ 3. Ոռոգման ցանցի որակից և ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ
--	---

Ծրագիր 1 Համայնքի ոռոգման ցանցի ջրամատակարարման համակարգերի ընթացիկ նորոգում,

Ծրագրի նպատակ. Բարելավել ոռոգման ցանցի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունը և որակը համայնքում	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ . ոռոգման ցանցի ջրամատակարարման ծառայության որակից բնակիչների բավարարվածության աստիճանը - միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Ծրագրի գնահատման համակարգ . ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ, , առաջատար մասնագետ	2020թ. հունիս – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել ոռոգման ցանցը և ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունը և որակը համայնքում	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Տարվա ընթացքում վթարների վերացում և ջրագծերի ընթացիկ նորոգում իրականացված 2. Բնակիչների - կարծիքը ոռոգման ցանցի որակից ջրամատակարարման մատչելիությունից, ավելի շատ լավ քան վատ	Տեղեկատվական աղբյուրներ ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ		2020թ. հունիս – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկա են եղել
Միջոցառումներ (գործողություններ) 1. Ոռոգման ցանցի համակարգի ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացում և վերահսկում 2. Վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 11 Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 1000,0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 3			

Ծրագիր 2. . Համայնքի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնում

Ծրագրի նպատակ. Բարձրացնել համայնքի փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը, փողոցները դարձնել լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի, տրանսպորտային միջոցների և զբոսաշրջիկների համար	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի փողոցները դարձնել լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի, տրանսպորտային միջոցների և զբոսաշրջիկների համար - 2. Գիշերային լուսավորված փողոցների քանակի ավելացում	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի աշխատակիցներ	2020թ. մայիսից – 2020թ. օգոստոս	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
---	---	---	--	---------------------------------	---

Միջանկյալ արդյունք 1. Համայնքի փողոցները դարձել են լուսավոր, գեղեցիկ և բարեկարգ	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Փողոցներում տեղադրված հենասյուների քանակը/կմ - 120/9000 2.. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից - ավելի քան ավատ 4. Ծրագրի իրականացման ժամկետը – 6 ամիս	Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Լեռնապատ գյուղի բնակիչներ	Համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի տեղակալ	2020թ. մայիսից– 2020թ.հոկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկա են եղել
Միջոցառումներ (գործողություններ) 1.Համայնքի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում 2.Փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման, աշխատանքների իրականացում և վերահսկում 3.Աշխատանքների կատարման ավարտական ակտերի կազմում,քննարկում և հաստատում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1.Համայնքի բյուջով նախատեսված ծախսեր՝ 1000.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 4 3.. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ոլորտ 6. Տրանսպորտ					
Ոլորտային նպատակ . Բարձրացնել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1.Համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ոչլավ, ոչվատ 2.Ասֆալտապատված ներհամայնքային ճանապարհների և փողոցների երկարությունը՝ 4483 մ			
Ծրագիր 1. Համայնքի արտավայրեր տանող հանդամիջյան ճանապարհների նորոգում					
Ծրագրի նպատակ. 1. Բարեկարգել համայնքի արտավայրեր տանող ճանապարհները,դրանք դարձնել անցանելի գյուղացիների և մեքենաների համար: 2.Անասնապահության զարգացման համար ստեղծել բարենպաստ պայմաններ:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է համայնքի բնակչությանը անցանելի ճանապարհներով երթևեկելու ծառայության մատուցումը և արտավայրերի հասանելիությունը - 100 %-ով	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար իտեղակալ, համայնքապետարանի աշխատակազմի միջոցով	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունքներ. 1. Համայնքի բնակիչներն առանց խոչընդոտների,	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.Վերանորոգված «Քոռ աղբյուր» կոչվող հանդամաս տանողճանապարհի	Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավարի տեղակալ,	2020թ. ապրիլ – 2020թ. հուլիս	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական

ժամանակին օգտվում են հանդամասերից և ճանապարհներին չեն ունենում հավելյալ վառելիքի կորուստ: 2. Բնակիչները չեն կատարում մեքենաների և տեխնիկայի անսարքությունների վերացման ավելորդ ծախսեր:	երկարությունը -12 կմ 2. Աչալուրդ արոտավայրեր տանող վերանորոգված հանդամիջյան ճանապարհի երկարությունը -13 կմ 3. Բնակիչների բավարարվածությունը վերանորոգված հանդամիջյան ճանապարհների անցանելիության վիճակից - բավականին լավ 4. Ծրագրի իրականացման ժամկետը -4ամիս	աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, գյուղերի բնակիչներ			ռեսուրսների անբավարարություն
Միջոցառումներ (գործողություններ) 1.Կազմել արոտավայրեր տանող ճանապարհների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: 2.Վերահսկել ճանապարհների նորոգման աշխատանքները: 3.Աշխատանքների կատարման ավարտական ակտերի կազմում,քննարկում և հաստատում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1.Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 600.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 3 3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2 4. Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ծրագիր 2. Համայնքի փողոցների բարեկարգում և ասֆալտապատում					
Ծրագրի նպատակ. Համայնքի փողոցները բարեկարգել, վերացնել փողոցների ջրափոսերը և դրանք դարձնել անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Համայնքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին - 100 %	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ,	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալարդյունք 1.Համայնքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների	Ելքայինցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Ասֆալտապատված փողոցների մակերեսը - 880 ք.մ 2. Բարեկարգված փողոցների երկարությունը- 293 մ 3. Բնակիչների կարծիքը	Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	2020թ. մայիս – 2020թ. հոկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն

երթնեկության համար տարվա բոլոր եղանակներին:	ասֆալտապատված և բարեկարգված փողոցների վերաբերյալ - բավականին լավ 4. Ծրագրի իրականացման ժամկետը - 6ամիս				
Միջոցառումներ (գործողություններ) 1.Պատվիրել համայնքի փողոցների բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը; 2.Կազմակերպել մրցույթ; 3. Կնքել պայմանագիր մրցույթում հաղթող շինարարակա նկազմակերպության հետ; 4. Վերահսկել շինարարական աշխատանքները; 5.Կազմել,քննարկել և հաստատել աշխատանքների կատարման ավարտական ակտը:		Մուտքայինցուցանիշներ (ներդրվածռեսուրսներ) 1.Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ` 2 2. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր` 2 3.Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր` <b>7500.0</b> հազ. դրամ, <b>Ֆինանսավորման աղբյուրը` համայնքի բյուջեի միջոցներ և ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ սուբվենցիաներ			
Ոլորտ 8.Կրթություն					
Ոլորտային նպատակ. Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - լավ			
Ծրագիր 1. Համայնքում նախադպրոցական կրթության ապահովում և ընդլայնում					
Ծրագրի նպատակ. Իրականացնել համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը և հասանելիությունը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը և հասանելիությունը -շատլավ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների տնօրեն, Իրականացումը` ՀՈԱԿ-ի միջոցով	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է համայնքի «ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ների բնականոն գործունեությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների թիվը` 1 2. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների թիվը -36 3.ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների դաստիարակների թիվը -2 4.ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների խմբերի թիվը -1	Տեղեկատվական աղբյուրներ Համայնքի ղեկավար, համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ,	Համայնքի ղեկավար, համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն,	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն

	5.Մեկ երեխայի հաշվով սննդի օրական ծախսերը-100 դրամ 6.Մատուցված ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին - ամբողջությամբ 7.Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում -251 8. Ծնողների բավարարվածության աստիճանը մատուցված ծառայությունների որակից - շատլավ 9.Ծրագրի իրականացման ժամկետը 1տարի	բնակիչներ (ծնողներ)			
--	--	---------------------	--	--	--

Միջոցառումներ (գործողություններ).

1. ՀՈԱԿ-ների աշխատակազմերի պահպանություն
2. ՀՈԱԿ-ների շենքերի և գույքի ընթացիկ նորոգում
3. Ծնողական վճարի չափի մասին ավագանու որոշման ընդունում
4. Մանկապարտեզների խմբերի ավելացում
5. Գործող օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին ՀՈԱԿ-ների գործունեության համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում

Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).

1. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների աշխատակազմերի աշխատակիցներ՝7
2. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների շենքեր և գույք
3. Համայնքի բյուջեով նախատեսված ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների պահպանման ծախսեր՝ **9040,0,0**հազ. դրամ, **Ֆինանսավորման աղբյուրը՝** համայնքի բյուջեի միջոցներ

Ծրագիր 2. Աջակցություն դպրոսի աշակերտներին

Ծրագրի նպատակ. Բարելավել դպրոց հաճախող բազմազավակ ընտանիքների երեխաների ապահովվածությունը գրքերով և գրենական պիտույքներով	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է դպրոց հաճախող բազմազավակ ընտանիքների երեխաների ապահովվածությունը գրքերով և գրենական պիտույքներով	Ծրագրի գնահատման համակարգ. դպրոցի տնօրեն, ծնողական խորհուրդ, ծնողներ	Համայնքի ղեկավար, Լեռնապատի դպրոցի ՊՈԱԿ-ի տնօրեն	2020թ. սեպտեմբեր – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել են դպրոց հաճախող բազմազավակ ընտանիքների	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.աջակցություն ցուցաբերած աշակերտների թիվը -160 2. Մեկ երեխայի հաշվով փաստացի ծախսերի	Տեղեկատվական աղբյուրներ Համայնքի ղեկավար, Լեռնապատի դպրոցի ՊՈԱԿ-ի տնօրեն	Համայնքի ղեկավար, Լեռնապատի դպրոցի ՊՈԱԿ-ի տնօրեն	2020թ. սեպտեմբեր – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն

երեխաները գրքերով և գրենական պիտույքներով	գումարը -2187,5դրամ 4.Ծնողների կարծիքը մատուցված ծառայությունների վերաբերյալ - լավ 5. Ծրագրի իրականացման ժամկետը 4 ամիս	հաշվետվություններ, բնակիչներ (ծնողներ)			ուն
Միջոցառումներ (գործողություններ). 1. Կատարել դպրոց հաճախող բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հաշվառում 2. Ճշտել ցուցակը դպրոցի տնօրինության հետ 3. Գումար փոխանցել դպրոցի գրքերի ֆոնդի հաշվին 4.Ծրագրի իրականացում և վերահսկում:.		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1.Համայնքում հաշվառված և դպրոց հաճախող երեխաների անձնագրային տվյալերը 2.Սոցիալական պայմանները ստուգող հանձնաժողովի առկայությունը 3.. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 350,0 հազ.դրամ, Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ					
Ոլորտային նպատակ. 1.: Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը և ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը		Մատուցված մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 80%			
Ծրագիր 1. Մշակութային կյանքի կազմակերպում					
Ծրագրի նպատակ. • Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը Ապահովել համայնքի մշակութային ծառայությունների մատուցումը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը, 80% Բնակիչների գոհունակությունը մշակութային կազմակերպությունների ծառայություններից 90%	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ , մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար, մեծերի և փոքրերի պարի խմբի ղեկավարներ	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
